ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 194

«29» 09 2014թ.

ք. Արտաշատ

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2014 թվականի տարեկան ծրագրով.

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում սույն թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 3-ը՝ 5 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախահաշիվներով հաստատված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ